



ԲԱԳՐԱՏ ՈՒՂՈՒԲԱՔՅԱՆ

ԴԱԴԻ ԿԱՄ ԽՈՒԹԱ ՎԱՆՔ

Պատմական Հաթերքից վեր, Թարթառ-Տրտուի ձախ ափին, գտնից կես կիլոմետր հեռու, մի բլրակի վրա, փոփած է վանքի համալիրը՝ ժամանակից սեպացած ու մասուհալած կիսավեր մատուռներով, մին ու նոր եկեղեցներով։ Ամենանոր եկեղեցին 18-րդ դարի վերջից է։

Դադի վանք է կոչվում Թադեոս առաքյալի յոթանաշուն աշխարհներից մնակի՝ Դադի կամ Դադոյի անունից, նաև Խորա վանք, որովհետոն կառուցված է Խորա (բլրակի) վրա։

Սա Արևելից կողմանց գավառների հնագույն քրիստոնական շենքերից մեկն է։ Ըստ ավանդության՝ վանքի առաջին եկեղեցին պետք է կառուցված լինի մ.թ. առաջին դարի երկրորդ կեսին։ «Դադի» մի երանանիցն, որ գնաց հրամանաւ Թադէի ի Սեծն Հայր և կողման հիւսիսոյ, և լուսալ զմանն Արգարու, դարձաւ և նմուս-ի Փոքր Սինէիք, և կրոնարուալ անդէն ծածկարաք՝ վահաճանեցաւ, և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ Դադիու»¹։

Վանական շինությունները փոփած են բլրակի վրա, իսկ բլրակի թիկունքում, հյուսիսային ու արևմտյան կողմերից, բարձրանում է անտառապատ սարը։ Դիմացը, Թարթառի աջ ափին, բանձրախիտ անտառի մեջ, խրուտորին բարձրանում է Լաշինաբերդ կոչված վիթխարի ժայռը, որն իր գործիստայ բարձր կողերի վրա պահում է ընդարձակ մի հարթություն՝ բոլոր կողմերից անմատնի, և մին դարերում պաշտ-

պանական անառիկ մի կետ է եղել Խաչների տերերի համար։

Խառնորակ աղբյուրներ կան վանքի ձախակողման փոքրիկ ձորակում և անմիջական վանքապարսպի տակ, որուք վանականներին հնարավորություն են ընձեռնելու ատեղծեղու պարագաներ։ Ներքում կիրճնի վրա կախված հսկա ծառերի տակ, շառաչում է Թարթառու։

Անցյալ դարի կեսերին այս կուսական ձորի այցելու աշխարհական գիտնական Արխիպ Բիազմունքի շերմագին խոսքեր է գրել իր օրագրում՝ Դադի վանքը ու շրջապատ բնութագրելով որպես բնական թուշանքի և մարդու առեղծած կատարյալի մի այնպիսի համարդություն, որի առաջ խոսքը դառնում են ամենորդ։ «Եթր մեր ուշադրությանն է ներկայանում արտակարգ ինչ-որ բան, այն ժամանակ կորչում է Ակարագորեկու ցանկություններ, տպավորություններից խենցացած գացցումն առևս գիտակցում է բառ-պրակարայուի պակասությունը... Այդ պատճառով է ատիպակ պիտի լինեն սահմանափակվել միայն մի քանի դիտողություններով»²։


Դատելով վանական օճանակ շինությունների քանակից, մատուռներից, բազմաքանակ խուցերից ու ժամանակից, պետք է եզրակացնեն, որ պատեղ մեծաթիվ միարանության ուժու է եղել և ոչ թե սո-

¹ Միխայէլ Աստրի, Ժամանակագրութիւն, Ցերուսաղէմ, 1871, հավելված, էջ 38։

² Акад. Г. В. Абих, Геологические наблюдения в нагорной стране между Курой и Араксом. Записки Кавказского отдела императорского русского географического общества, кн. 8, 1873, стр. 63.

Վորական մի եպիսկոպոսաթիւտ: Վաճքին սպասարկող աշխարհիկ բնակչության մասին ևս վկարություններ կան: Այս բնակչությունը բավականին մեծ մի զույգ էր կազմում: Միայն 300 ընտանիքներ տևափոխվել են Երևանի նահանգը, միմնել Ենիշա

խկ ազգական Ներսես Փիլիպյանն սպասում է «ի խորածորն» որ կոչի Դադոյի վանք»⁴: Ապա Վարագ Տրդատի կինը կննդանի մնացած ժամկ աղջիկ Սպարամին փախցնում է Խաչենի ամրոցը և ամուսնացնում գալատի տեր Ստրներսենի՝ Սահլ Սմբատյանի



Դադի վանքը. Ընդհանուր տեսարան

գոտը, իսկ սրանց մի մասն էլ գաղյթել է Շուլավերի կողմերը⁵:

Վաճական շենքերից շատերի վրա կառուցման տարեթվել չկան: Նրանց խոր հնությունը և ներառյալ վայրերի գույնը է ճարտարապետական ձևերից և աղբյուրագիտական տվյալներից: Դադի վանքը Արցախի Մեծկողմանը կամ Մեծկինը գալատի առաջնորդարանն է եղել, իսկ այս առաջնորդարանի հոգևոր նորու կյանքը անխարթ պահպանվել է քրիստոնեության մուտքի ական: Մեծկինը եպիսկոպոսները միշտ էլ եռամուտն մասնակցություն են ունեցել Հայոց Արևիկից կողմանց հոգևոր ու մշակույթային կանքին:

Մեզ հայտնի աղբյուրներում վանքը Դադի անունով առաջին հիշատակվում է: իններորդ դարի առաջին կեսի դեպքերի առիթով: Այս հայաշխարհի բնիկ տեր Սունշանիների ու եկվոր Միթրանյանների տոհմական պայքարն ավարտվում է առաջինների հաղթանակով: Վերջին Միթրանյան Վարագ Տրդատին ու նրա որդի Ստեփանոսին իրենց

որդու մետ: Ուրեմն Դադի վանքի ու նրա շրջակալքի տերերն Առանշանիներն էին՝ Աստրելերսից, նրա հայր Սահլը և նախորդներն ու նետնորդները:

Վանքն ու նրա միաբանությունը մեծամած աղևուների և նեթարկվում սելջուկյան արշավանքների պատճառով: Ժամանակի աղբյուրները միահամուն վկայում են Խաչենի և հատկապես նրա մշակութային կենտրոնների ավերումը Զոլի դաժան զրավարի կողմից: Սամվել Անեցու պատմելով՝ Զոլին խարեւությամբ իր մոտ է հրավիրում Խաչենի իշխաններին, կալանավորում շատերին, ապս «մաշեաց զերկիր» ստվով և սրով և գերութեամբ, ընդ որս քանանք և սորք կտակարանք և կրոնաւորք առ ոսու անկան անօրինաց»⁶:

Այս աղևուն տոնի է ունեցել 1143 (=ՕՂԲ) թվականին: Երկու-երեք տարի հետո Զոլին վերստին զալիս է Խաչենի վրա, որովհետև երկրի մնացած տև-

⁴ Մ. Կաղանեկատուացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1923, էջ 388:

⁵ Սամվել Անեցի, Հաւաքմունը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 132:

թիրն ապստամբել էին, թոթափել բռնավորի լուծը. «...սակաւ ինչ մնացեալըն յազատաց անտի, որք էին դողիալը յանտառա մայրեաց, առին դարձեալ գրերդ ամրոց իրեանց, և դարձեալ ապստամբութեամբ վարչեն ընկ Տաճկացն»⁶:

Սա անգամ Չոլին գալիս է վրեժմանորոշան կատախ մոլոցքով և, չկարողանալով տիրել Խաչենի ամրոցներին, ավերում ու օրի է մատնում զալստի անպաշտպան բնակալարերը, ինչպես և Դադի վանքը. «Եսկ զամոցն ոչ կարա առնող, բայց զգաւոս զամենալի ի սպառ ամերէ. պահեան և զառաքալատիր ուխտ սրբութեան որ կոչի Դադուի վանք»⁷:

Պատը է կարծեն, որ շատ շուտով վերականգնելով է վերացվել և ավերածոյան հնութերը, բավարը, վերացվել են ավերածոյան հնութերը, բա-

տեսել բովանդակ Հայաստանում, և եթեն նրա մետ համեմատկու մի տեղ գտնում էր, ապա Կիլիկյան նայոց բազավորությունն էր⁸:

Դադի վանքի շնորհերը Թիմնականում պահպանվեն են, և նրանց ներկա վիճակի միջնա վրա դժվար չէ ներկայացնել բարգավաճ օրերի ընթանուր պատկերը:

Վանքի ամբողջ համակերը կարելի է ընթիւնոր առնամք բաժանել երկու մասի. մեծ ու կարևոր մաս, որը գտնվում է պարսպից ներս, և լրացրից շնորհութեան մաս, որ պարսպից դորս է և գտնվում է կիսավեր վիճակում:

Պարսպի ներսի շնորհութեաների մեջ իր հնութքամբ աշքի է ընկնում Բաղիկիկը: Խատկով տեղից ու դիրքից, պեսք է կարծեն, որ սա վանական շնորհեց հնագոյնն է կամ հնագոյններից մեկը: Գտնվում է համալիրի հյուսիս-արևելյան ծայրում, թերության վրա, հյուսիսային պատով հողի մեջ բաղված (երկի սկզբնապես էլ այդ պատը գետնի մեջ է եղել), և մյուս շենքերը կառուցված են նրանից դեպի արևոտք, հարավ ու արևելք:

Այժմ կանգուն են միայն բաղիկի պատերը: Արեւելյան ապսիդ է (կիսարողորակ)՝ սեղան տեղավորելու համար, մյուսները՝ հաթի, հիմնականում անտաշ քարերով կառուցված: Հյուսիսային ու հարավային պատերն ունեն խցիկներ հիշկցնող որմնադարաններ, հյուսիսայինը՝ չորս, հարավայինը՝ երկու, որոնք երիզված են սրբատաշ քարերի շրջանակներով: Քանի որ արևմույն դորս և նոյն սրբատաշ, քանդակազրդ քարերով է երիզված, կարելի է մոտածեն, որ սա հնատագի նորոգման արդյունք է, թերևս բազիլիկին կից զավիյե կառուցող Գրիգոր եպիսկոպոսի գործը, որի մասին պիտի խոսենք:

Հարավային ու հյուսիսային պատերն ունեն երեք ական որմնապյուներ, որոնց վրա հանգձիխ է եղել թաղակապ տածիքը: Կենտրոնական որմնապյուները մյուսներից տարրերվում են. ճրանք ավելի հասան ու բարձր: Հավանաբար եկեղեցին կենտրոնում գրմքեր է ունեցել՝ այդ բարձր ու հաստ որմնապյուներից վրա:

Շենքի ներսում, սեղանի տեղ, այժմ էլ կանգնած է մեկուկես մետր բարձրություն ունեցող սրբատաշ մի քար՝ ծածկված մեծ ու փոքր խաչանախելերով: Այդ քարից հարավ բուսած է եղել վիթխարի մի ընկույզենի, կտրել են, բնից նորն է բարձրացել, դարձալ կտրել են, և հիմա թանձրասաղարթ մի թուի է դարձել: Ընկույզենու գոյությունն ինքնին վկայում է, որ եկեղեցին վաղոց է գրկվել տածիքից:

Բազիլիկի գավիթը.—Դրսից անտաշ քարերով կառուցված ու ծնիդով հարդարված բարձր շինություն է, միայն դորս՝ քանդակազրդ: Կառուցող Գրիգոր եպիսկոպոսի արձանագրությունը փորված է դուս



Արգու-խաթունի եկեղեցին հյուսիս-արևելքից

Ծի որ 12-րդ դարի երկրորդ կեսին Միհիթար Գոշը, Խաչեն զալով և հյուրընկալվելով Վերին Խաչենի իշխանաց տանը, երկրի աշխարհիկ իշխանությունն ու հոգնոր կյանքը գտավ մի ապահով բարգավաճ վիճակում, որպիսին նա չէր

⁶ Մ. Գոշ, Կաթողիկոսք և դեպի Աղուանից աշխարհին ի մեջ ԺԲ դարու. Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 886:

⁷ Ան:


⁸ Միհիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վահարշապատ, 1880, Ֆրանքֆուրտ էջագրություն, էջ 71; Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 406—407;

աջ կողմին. «Թ. ՈՀԳ (=1224) եւ տր Գրիգորիս առաջնորդ որ ովախիս, որդի նահատակին Վասակյա, շինեցի զժամասուն լիշտակ նոգոյ իմոյ...»:

Սա կրոնավորած Հասանի որդի և Միսիթար Գոշի նովանակոր Վահտանգի եղբայր Վասակի որդին է,

քարչ թաղ-կտուր: Այսունիքը բառանկյունի են, նախշազարդ:

Գավթին շուր ու գեղեցկություն են տվել պատուի մեջ ագուցված մեծ ու փոքր խաչքարերը, որոնք կարող են նաև մատվել 12—13-րդ դարերի լավա-



Արգու-խաթունի կաթողիկենի հարավային ճակատը. իշխանազուններ Հասանի և Գրիգորի բանդակները

այն Վասակի, որ 1201-ին Սյունիքի Գողաշտյանը ետ և վաճեց յուրքից ու նահատակվեց:

Գրիգորի ժամատունը կառուցվել է հինավորց և կեղեցուն կից և, բնականարար, պետք է հարմարվեր նրա ճարտարապետական առանձնահատկություններին: Սակայն իրականում արքես չի եղել: Ծինարարը կարգավորել է հին անշուր քագիիկը, արել Բնարակոյ քարենորդությունը (որմենադարձներ ու դուների երիգավորում ևն), ապա նոր միայն կառուցել գալիքը, որը, դրսից որքան էլ անշուր, ներքին հարդարանքով կարող է համարվել ժամանակի հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներից մեկը:

Ճառաքրիդի ճարտարապետական տևաք ունի այս գավթի կտորը: Պատկից չորս պյուներն իրենց վրա պահում են թևարաց կամարները, սրանց վրա էլ յաղն է, և թաղի վրա՝ կլոր մի գմբեթ՝ որպես երկ-

գույն օրինակների ներ: Փոքրածավալ խաչքարերի մի երկար շարք էլ ճգկում է արևելյան պատի կենտրոնով՝ ծայրից ծայր, եկեղեցու մուտքի աջ ու ձախ կողմերին: Բացառիկ նորք բանդակներով ծածկված, ասես ժանելկազարդ այս խաչքարերից ամեն մեկը պատմում է ժամանակի որևէ մեծատունի այս կամ այն նվիրատվության մասին:

Նախազարդ այս խաչքարերի ներ համարվում է փառամել շքամուտքը՝ իր ծաղկազարդ բանդակներով: Մուտքի դռան նախշուն երիգները կրկնում են Արգու-խաթունի եկեղեցու դրուք, որի մասին պիտի խոսենք: Կարելի է ենթադրել, թե Գրիգորի եկեղեցին կառուցվել է հրանից միայն տասը տարի առաջ՝ ավարտվան Արգու-խաթունի եկեղեցու շինարարի ձեռքով: Սակայն ավելի հավանական այն է, որ Գրիգորի եկեղեցու վարպետը պարզապես ընդօրի-

նակել է Արգու-խաթումի եկեղեցու դուռը՝ ի վիճակի չինորով կրկնելով շնչարի մոտ արժանիքները:

Գալիքը Հաթերի իշխանական տան տարսաւատումն է եղել: Հատուկը ծածկված է գերեզմանաքարով, որոց գրեթե ջնշված են արդեն:

Գրիգորի գավիթի շարունակությունն է կազմում (արևմտյան կողմից) մի հիմ՝ ու ամշուր եկեղեցի կառուցված անուաց քարով: Այն ճարտարապետա-



Արգու-խաթումի եկեղեցու արևմտյան պատի մեծ արձանագրությունը

կան լուրջ արժեք չի ներկայացնում, սակայն ներսի և դրսի պատերի վրա ունի եղծված ու մասամբ պահպանված արձանագրություններ, որոնց ընթերցումն անպայման նոր ծագքեր կրացի երկրամասի հիմ պատմությունից:

Արգու-խաթումի եկեղեցի-կաթողիկեն.—Վաճական համալիրի ամենաշքեղ կառուցն է, որն պաօք է, Բամարյա ամիսաբար պահպանված, ներկայացնում է որպես Բայկական ճարտարապետության 18-րդ դարի ամենափառավոր կողողներից մեկը: Գունվում է վաճական տարածության արևմտյան ծայրին: Այս շինությունից ավելի վաղ կառուցված բոլոր եկեղեցիները ձգված են եղել երկու շարքով՝ աշ ու ձախ կողմերի երկարությամբ, և այս կաթողիկեն դրվելով համալիրի երկու շարքերի արանքում (խորքում՝ դարձել է նրա առանձին մասերն ի մի նավաբող կենտրոնը):

Կաթողիկենի կառուցն Հաթերի մեծ իշխան Վահագանգի կիմ Արգու-խաթումն է եղել, նրա արձանագրությունը պահպանվել է նարավային պատի վրա 19 երկար տողերով և շատ մանրամասներ է պատմում ինչպես կառուցի, այնպես էլ կառուցողի ճակատագրից: Ամա այդ արձանագրությունը՝ «Ընորիի ամենակարողին Այ և Միամնի որոյ նորո Ցի Քի և պարգևոք ամենասուր նոգոյն եւ՝ Արք ու խաթուն, նուաս աղախին Քի, դուստր մեծի իշխանա իշխանին Քրիստ և ամուսին Վահագանկայ թագաւորացնոյ տն Հաթերքոյ և ամենայն Արքին Խաչեմու, յուսով մեծա շինեցի զուրք կաթողիկեն ի տեղուց Բանգստարանի ստո իմոյ և զաւակաց ինոց՝ Հատանայ անդրանիկին իմոյ և Գրիգորի, որ ի Տէրն կէսարեա վահանանիոյ, զի վաս մեղա իմոց խրատեաց զիս Ած: Խմ Հատան սպանա ի թուրքաց պատերազմին վաս քրիստոնեական հաւատոյ և զեմի երից ամսոյ զերտսեր որդին իմ գրիգորն ի Տէրն կոչեցեալ զաւար բնութեան հասուցաներով վեարեաց ի կենցաղոյն և փոխեցա առ Քս, սուզ ամենիքար թողով թշուառացելոյ մարս իրեանց: Այլ զի ի կենդանութեամբ իրեանց յոյ ի մոի եղեալ նոց շինել եկեղեցի յալմ տեղուց և ոչ ժամանեցին վաս արագարսա լինելոյ ի Վերա նոց մատուն. և ինձ աւանեցին անդարձի կատարել զիափառ սրտից նոցա. և իմ յանձն առեալ մեծ յուսով և շատ աշխատութեամբ շինեցի գքաւարանս ի փրկութիւն հոգուց նոցա և իմոյ, դուռեար և ամենայն զարմից: Արդ աղերսի Բայցեմ, որք երկրապագէք սրոյ ինուանին, յիշել յաղաթս ձեր զվերոյ գործառ ի մաս: Կատարեցա ի թուականութեան Հայոց Ուգ. (=1214). ի փառս Սատուծոյ: Եւ ի նորոգութիւն սր ուխտիս սահմանեցաք ժառանգութիւն եկեղեցւոյ զիսոյ և ազգարակ իրեանց սահմանաբար զԱմպաթէն և զԵզնարածանց և զՔչանց և զՂանաչարն որ ի Վայոց ձոր և երկու սունս յԱրդիա: Հատառեացաք կամակցութեամբ եղրացս զաւագ խորանի պատարագի բանուն վերյ գրելոց կատարի ամիսափառ: Ոք այս վճի հասատոնյ խափանուն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղուց կամ ո ոք եւ իցէ, խափանեցի յոյ նորա որ առ Քս և դատապարտեացի յԱյ»:

Ուրեմն, Արգու-խաթումը դրստրն էր Քրիստո, կիմը Հաթերքի այն Վահատանգ իշխանի, որ 12-րդ դ. Վերշին իր մոտ պահեց, Բովանավորեց Միահար Գոշին, ապա իր մինձ եղրայրների (Վասակ, Սմբատ, Գրիգոր, Գրիգորիս, Խոյրան) մետ միասին՝ մեծ վարդա-

* Առ Կայենի ու Սահմանաբերդի տերն էր և Տիմիսի իշխանը, Միահար Գոշի մեծ բարձրամասը, Բայրոյ Դավիթ և Սադուն իշխանների: Սադունը խոշոր դեր կատարեց վրաց-Բայկական պետական կյանքում, մեծ մասամբ նրա բանակցությունների արդյունքն էր մոնղոլ տիրապետողների բարյացակամությունը վրացիների ու Բայերի մկանամբ (տե՛ս Կիրակոս Գանձակիցի, Պատմութիւն Բայրոյ, Երևան, 1961, էջ 208—210, 215 և հազ.):

պետի համար կառուցեց Նոր Գևարիկի վանքը: Վախտանգի ու նրա կողակից Արգու-խաթունի երախտիքը բանի-բանի՝ անգամ միշել է Մխիթար Գոշն իր գործերում, սակայն շատ բնորոշ է նրա Դատաստանգրի ձեռագիր ընծայական ինքնագիրը. «Յս Քս, յորման գաս ի նորոգել գերկիր, նորոգեա հոգով և մարմնով զատուածաւը իշխանն իշխանաց զվախտանց և զամուսին իր զԱրգու խաթուն ի կիան ամեման»:

Արգու-խաթունը, ինչպես երևում է սույն արձանագրությունից, կաթողիկեն կառուցել է իր ամուսին Վախտանգի և երկու տղաների գերեզմանների տեղը («ի տեղուց հանգստարանի»):

Կաթողիկեն հատակագիծը մեր խաչաձև-գմբեթավոր նկեղեցիների համար ընդհանրականն է, հավասար քառանկյունի թևերով: Երկի ալս պատճով էլ կոչվում է «Սուրբ Խաչ», նաև՝ «Սուրբ Նըշան»:

Բնմը՝ պատ սեղանով, տեղափորված է արևնշան պատի կիսաշրջանի մեջ: Կան նաև ուր փոքր սեղաններ՝ տեղափորված անկունների եռամարդկանու չորս խորաններում, սրամի մակարդակից բարձր: Դեպի այդ խորաններն են տանում պատերից դորս ցցված քարե աստիճանները, որոնց մեջ մասն արդեն կոտրատված է:


Եկեղեցու ներսի պյունիքը, կիսապաներն ու նրանց վրա բարձրացած խաչվող կամարները սրբատաշ գորշ քարից են, զարդարված նուրբ քանդակներով: Նույն քանդակազարդ քարերով գոտուրվում է բարձր թաղը, որի վրա խոյանում է շքել զմբեթը:

Ներսի պատերի մնացած մասերը ծեփված են կրաշաղախով, և ծեփված բոլոր պատերն ել եղել են նկարազարդ: Այժմ նկարներից քիչ քան է մնում: Ծեփը տեղ-տեղ քանդված է, ճաքճրված: Որմնանշ-կարների մեջ մարդկային կերպարանքները հազիլ են հշմարվում պատերին հստած կեղտի տակից:

Կառուցողն ամեն կերպ աշխատել է կաթողիկեն դրսից դրաձնել շրջապատի վանական շինուայինների զարդը: Գորշ ու սև որձաքարի, տեղական վարդագոյն տուփի ու սպիտակվոն կրաքարի համադրությունները ստեղծել են պերճախոս մի հորինվածքը: Իսկ երես նկատի առնենք և քանդակագործի նուրբ աշխատանքը, որ երևում է բոլոր պատերի վրա, ապա համարձակ կարող ենք ասել, որ այս շենքը հայկական միջնադարյան ճարտարապետության ամենահինգնատիպ ու շքել հուշարձաններից մեկն է:

Հյուսիսային պատը զարդարված է բարակ ու նըրքանախ որմնապաններով, որոնց վրա պացած երեք կամարներից միշին իր տակ ունի մի փառամելու դրույթ: Ուուր հայկական եկեղեցիների հյուսիսային պատերի մեջ անսովոր երևույթ է: Ուրիշ պարագայում կարենի էր մոտածել, որ ենտու են բացել պղկայ կարիքների համար: Սակայն տվյալ դեպքում այն կառուցված է եղել շնչել մետ միաժամանակ, նրա ամրող ճարտարապետությանը համապատասխան, և որոշ արժանիքներով է կարող է համարվել կա-

թողիկենի ամենագեղեցիկ մասերից մեկը: Դոնեցիների կիսագլանները, նրանց վրայի խոյակների երկրաշափական նորք նախշերը և հատկապես դուռ կամարի ներսի զարդարանդակները չեն կրկնված շնչելի որևէ մասում: Բացասիկ տպավորություն են բոլոնում հատկապես խոյակների և կամարի ներքո, բարավորի վրայի իրար կցված յոթ սորտանկուն նուանցությունների ներսի նախշերը: Դուռ կամարի տակ մի




Արգու-խաթունի կաթողիկենի հյուսիսային դուռը

վարդյակ է բարձրաքանդակված, որի ներսում ևս երկրաշափական գեղեցիկ նախշեր են՝ միանգաման տարրեր մյուսներից: Եսկ կամարը վերևից շրջանակող երկու ուղիղ անկունների ներսում քանդակված են տաններկու թևանի վարդյակները: Եվ անա պյունիքի ներս, ավելի շատ՝ պարան ընդգրիտ եպրանախշերն են, որոնք երկու լազ շարքը կողքերից ու վերևից եզրերում են դուռը և իրենց բարդ ու նորոշ հյուսիսապես կարող են մրցել ուսկերչական ժանձնակարգերի մետ:

Սրբելյան պատը ևս աշքի է ընկեռում իր ճարտարապետական ու քանդակագործական գեղեցիկ լուծումներով: Կենտրոնում, որմնապաների վրա, ծիածանվում է նախազարդ մեծ կամարը, որի մեջ տեղադրված է Արգու-խաթունի ընդարձակ արձանագրությունը նկեղեցու շինարարության մասին: Վերև վերև վերևից վար ձգվող ենդ բաւամուսն է, որից աջ

ու ձախ պատվիրասով երկու որդիների քանդակ-ներն են՝ ամբող հասակով, և լուսամուսից բարձր պատում են կաթողիկոս եկեղեցու մակետը: Այս կամարից աջ ու ձախ դարձյալ երկուական փոքր կամարներ են նաև նամազչում կիսագմանաձև որմանապուների վրա, որոնցից ներսին ունեն վերից վար ձգվող քանդակազարդ որմանախորշներ: Այս բոլորը վերևու պատկում են խաչաձև մի լուսամուսով, որը և ամբողջացնում է պատի ճարտարապետական պատկերը:



Մեծ տաճարի դռան զարդանախութեր

Ճարտարապետը, հավանաբար, շատ է մտածել նարավային պատին ուրում լուծում տապու մասին: Բան այս է, որ Բանարավոր եղանակները սովորաբար սպառվում են արևելյան ու արևմտյան պատերի վրա: Տևյալ դեպքում արևելյան պատու ունի զույգ քանդակներ և նրանց շուրջը հյուսված ճարտարապետական մանրամասներ: Սրմանոյան պատու է շրաբուուն է, որը հուշում է իր համապատասխան լուծումները: Ինչ պետք է արվեր հարավային պատի ձևավորման համար: Ճարտարապետն պատեղ պատու շնորհկող մեծ կամար է դրև, ներսում լուսամուս բացել և, արևելյան պատի ձևերը չկրկնելու համար, լուսամուտի երիգ դարձրել եռաստիճան կիսագմանների նախշը: Եվ այսքան էլ բավարար չը-ժամանակով լուսամուտից վերև երկու տղամարդու քանդակներ է դրել՝ եկեղեցու մակետի հետ: Սակայն սրանք արդեն արևելյան պատի քանդակների կը ընթառին չեն, այլ դիմաքանդակներն են միայն, որոնց դիմագծերն արտահայտված են առավել ցայտուն:

Արզու-խաթունի կաթողիկեն կառուցվել է առանց գավթի: Այդ պատճառով էլ ճարտարապետն աշխատել է իր տաղանդի բոլոր փայլերը դրսուրել արև-

մբայան պատի վրա, որ մուտքն է եկեղեցու: Սըր-բառաց հարթ ու ընթարձակ պատի վրա ծիածանվում է մի նախշուն կամար, որն իր տակ է տպում շրա-դուուր:

Դուրը պամանվել է իր նախաստեղծ ամբողջ շըեղութամբ: Երիգները ներսից և դրսից գլանաձև ու պարանաձև նախշերի մի համերաշին համադրու-թյուն ունեն: Նրանց արանքներում աշակողիման ե-րեսի վրա՝ քառակուսիների մեջ զարմանազան քան-դականախշեր կան, որոնք չեն կրկնում իրար: Զա-

յակողման երիգի հարթ երեսին քանդակված են երկու խաչեր՝ հյուսվեն նախշերով. մեկը՝ վերևում, մյուսը՝ ներքևում, նրանց արանքում է՝ քանդակագործի հնքնագիրը. «Նկարող սուրբ Աշանաց զՊօ-նու յիշեցեր» կերեք տողով. «Ըկրող // Աշանաց // զՊօնացք»¹⁰:

Գմբեթը մեր միջնադարյան եկեղեցիների համար բնորոշ բոլորից պահան է ամբողջ շինուածան վրա՝ իր կամարապուա որմանախշերով, երկայնակի ձզգ-վոր նախշազարդ խորշերով ու մեկնեներ է՝ քան-դակագործ լուսամուտներով: Այստեղ ընդմանուր ճարտարապետական երևույթի մեջ կառուցող դարձրալ դրև է հնքնատիպ գեղեցիկ ձևեր, որոնցով

¹⁰ ՀՅԱԳՅԱՆ Վ. Բարիտուդարյանը, խուելով այս խաչերի մասին, պապմամբ նրամբ տեղադրում է մուտքից վեր, ապա նեխադրում, որ «այս վարպետը ևս պիտի մասնակցած լինի վերանդրոգման աշխա-տանքներին XVI—XVII դարերում» (Վ. Բարիտու-դարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարոզոր վարպետներ, Երևան, 1968, էջ 180, նոյն կրկնված էջ 188-ում): Հետազոտող նմթադրությու-նը ոչնչով չի միմավորված:

և սովոր զմբերը շանչեանքըն տարբերվում է համանան սովորական կառուցներից: Նշեմք, օրինակ, գոյմերի զմբերը խաղը, զմբերի ծածկի մաքրոր հղլված ու ի իրա ագործած սպերը, գորշի մուգ երանք ունեն, ամբողջ թմբուի ֆոնը բաց վարդագոյն է, նիստերի կամարներն ու սրանց հիմքը պարզ են, և գտուորդ կարնիզը՝ նորից գորշ: Լուսանցքներից ամեն մեկի պասը մի ինքնախիք լուծում ունի և տանձմին դիտվում է որպես լուրջինակ քանդականախ:

Ասացինք, որ եկեղեցին սկզբանակ գավիթ չի ունեցել: 18-րդ դարի կեսին նրան արևմտութիւն ավելացրել են երկար ու ամշուր մի շինություն, որը և պետք է գավիթ դեր կատարեր¹¹: Այս լրիվ կանգուն է մինչև հիմա. հարավային պատի տեղ կամարակապ, ծաճրանիստ պյունաշար է, իսկ հակառակ կողմում, ինչպես նաև արևմտյան երեսից՝ խոլ պատեր են: Ծածկը թաղ է՝ վրայից ծանրացած երկթեք տանիքով: Մի խոսքով՝ եկեղեցների այն սովորական օժանդակ շինությունը, որ կոչվում է պղղոտանկ գավիթ:

Այս շինության մեջինակը, ըստ երևոյթին, եղել է ճարտարապեսությունից հեռու մի արհեստավոր: Նրա համար ոչ մի կարևորություն չի ունեցել այն հիմնական շենքը, որին կցվել է իր ստեղծագործությունը» որպես օժանդակ շինություն: Այդ պատճառով էլ իր պղղոտանկ գավիթն այնպիսի է կացրել եկեղեցու շքամուտքին, որ կիսել է նրա քանդականախ կամարը, վերջինիս մի մասը թողել գավիթ կողոքից վեր:


Երկու աեզուգական խաչքար. —Պղղոտանկ գավիթն արևմտյան կողմից կամած է մի կրկնամարկ զանգակատուն, որի առաջին հարկը խոլ է որոր կողմերից, արևմտյան պատն ի վեր սանդուռը է քարձանում մինչև երկրորդ հարկի մակարդակը: Երկրորդ հարկում կամարակապ որմնախորչի մեջ հայացքով դեպի արևմտությ կանգնեցված են Դատի վանքի երկու հոչակապոր խաչքարերը:

Այս շինության երրորդ հարկը քառասուն մի գրմբեց է, որ հնում, հավանաբար, կախված են եղել վակրի զանգերը: Գերերի բատակող ծածկը, կամարները, չորս կլոր սյուները և սրանց խոյակներն ու հիմքը սրբատաշ են, գեղեցկաշևն և ամբողջության մեջ յոթնում են համեմի տպավորություն: Ըստ երևոյթին սկզբանական զանգակատուն առաջին ու երկրորդ հարկերը բացվածք են ունեցել, և հետագա պատմում է, որ վիթխարի խաչքարերը կանգնեցրել են երկրորդ հարկի խորքում ու ետևից փակել, որպեսի ամբողջ շինությունը դառնա մի տևակ շքամուգահարական այդ փառաթեղ խաչքարաների համար:

¹¹ Պղղոտանկ գավիթ պատի քարերից մեկի վրա գրված է: «ՈՂ թլ.» (=1241): Եթև առ գավիթ շինուարտության տարին էլ չինի, համեմայն դիպու պետք է շնորհին, որ այս թվականին գավիթն արդին կառուցված է եղել, որպեսի նշված թվականին արձանագրություն քանդակելին նրա քարի վրա:

* * *

Արզու-խաթունի եկեղեցուց հարավ Հասան Մևծի եկեղեցին է՝ այլուսահն զմբերով, զմբերի պուրն արդեն քանդված:



Մեծ տաճարի լուսանցքների պահենը

Հատեմագրական բազմաթիվ տեղեկություններից ու վիմագրական հավաստի հյութերից հայտնի է, որ Վերին-Խաչենի իշխան Հասանը («ոտք Հաթերքու և Հանդարերդու, Խաչենարերդու և Հաւքախաղցին»), որպես Արցախական աշխարհի գամերեց իշխանը, բատակուն տարի (1141—1182) գահակալեց Բետու, իշխանությունը բաժանում է իր գավակների միջն, ինքը կրոնավորելու գնում Դատի վանքը¹²:

¹² Այս Հասանը պատմագիտական ուսումնակիրություններում շատ է շիփորի Խաչենում նույն ժամանակներին տիրություն անող ուրիշ Հասանների մեջ: Մակար ենք. Բարիստարայանցը, օրինակ, հանձին պա՛ ճանաշում է այն Հասանին, որ Գեռաքարից էր, թագավոր գնաց Սյունիի Կապան, ապա 12-րդի 60-ական թվականներին իր թագավորանիատը թողեց թշնամիներից պաշարված ու վերաբարձավ Խաչեն (Պատմություն Աղվանից, Ա, էջ 139—140): Դակ Ի. Ա. Օրբելին էլ սրան նույնացնում է Խոխա-

Նրա մետ վանք է գմում նաև կիսո՞ւ Մամա-խաթունը («ղուսար Կորիկյա քագառորդին»):

Այս փոքրիկ նկելցու շինարարության մասին արձանագրություն չի պահպանվել: Սակայն այս տեղ է Հասան մեծի արձանագրությունը: Ներսի



Դայի վանքի մեծ խաչքարի վերին մասը

ձախակողմյան խորանում, մի գեղեցիկ խաչքարի վրա, գրված է. «թ. Ո.Ա. (=1182) Խ՝ Հասան, որդի Վահանանայ, տէր Հաթերքու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հաւաքանաղցին, կացի յաւագութեան ամս Խ (40), շատ պատերազմա բայթեցի թշնամիաց ինոց ագնութեամբն Աստուծոյ և Եղին ինձ Զ. (=6) որդի: Ձքերդերս և գալասո նոտո նոցա և Խ նկի ի վանք մատո իմ եղայր պարոն տէր Գրիգորէս և Եղի կրանատոր և թռի զիաշքարս ի ՅԱՂ-ուայ, շատ աշխատութեամբ և բազում հնարիդ:

Ասքերդի տէր Հասանի մետ, վերջինս դարձնում վեց տղամերի տէր 1. կանքի մերջում էլ կրոնավորության գեցաց (II. Օ. ճալու, Գաւա: Ճշշու, Կոյզ Խառուսու ու Անդրանիկ Հակոբոս, Եւ Շահ, 1963, ստ. 146-147): Իրավանուն, սակայն, ո՞չ մեկը, ո՞չ է մոռան առնչություն չունեն խնդրու առարկա Հասանի մետ, իրե նկատի շատնենք, որ նրանք այդամիտներ են, մերկած երկրամասի տէր նին Առաջանանիկ տոհմի սկրունիներից:

կանցնեցի զար հշան նոգոյ իմոյ: Արդ, վասն ձեր հոգուցոյ, որք ընթեռնոյք, զիս յաշաւոս լիշտեցք:

Հասանի վեց արու զավակները պատմությանը հայտնի նաթերքան այն իշխանագումաներն են, որոնք իրենց մոտ ապասուած տվին Գանձակի մահմետական իշխանավորներից հայածական Միհթար Գոշին, հովանակորեցին նրան, նորդորեցին, որ գրի «Տատատանագիրքը», ապա նրա համար կոտուցիցին նոր Գանձիկի հոչակալոր վանքը: Այս վանքի շինարարությանը վերաբերող արձանագրության մեջ հիշվում են Հասան Բաթերքոց վեց որդիները:

Խնչքան էլ տարօրինակ լինի, Նոր Գանձիկի կամ Գոշավանքի շինարարության այս գիշավոր արձանագրությունը բոլոր ուսումնակիրուների կողմից է ընդորինակվել է սիալներով: Եթե Հովի. եպս. Ծամաթունյացը, Սակար եպս. Բարխուտարյանը և Կ. Կոտոսայացը խաչենցի իշխանագումաների անոնները գրել են Բետնեալ պահանավոր ու աղքատված ընթերցանությամբ: «...ձեռնոտութեամբ բարեպաշտ իշխանին Վահստանեկայ և նորին զուգակցին Արզու խաթունին և նորին եղարցն Սմբատայ, Վասակայ, և խորին Գրիգորոյ»¹³, ապա Բետնագում Բետնագումող Զանիդուայանը, Եախորդերի «Խորդան-խորդու» թյուրիմացությունը, արքեա. Ս. Զալայանցի ընդօրինակության միման վրա, ճշտելով որպես «Խորդան» անձնանուն, ուշադրություն չի դարձրել հաջորդ անման վրա («Գրիգորոյ»), որն արձանագրության մեջ ինքնատիկ գրություն ունի: Բանն այն է, որ հիմա արձանագրությունը բավականին բարեպահ է, և առաջին տողերը լրիվ ընթերցել անհնար է: Սակայն մեզ Բետնաքը ընտառը մասը, բարերախտաքար, պահպանվել է և ընթերցվում է անթերի: Այստեղ գրված է «Խոյ // դա Գրիգորոգրիսա...»: «Խոյդա» պարզ է, Վահստանցի Խոյդա կամ Խոյդան եղարցն է: Կիրակոսի վկայության մեջ ևս կա այս անոնք. «...Հինգ վարդապետն Միհթար իր միարանօքն, ձևացուութեամբ Վահստանեկայ Խաչենցոյ՝ տեսան Հաքերքոյ, և եղարց իրոց... Խոյդան, և Վասակայ, և այսոց իշխանաց բարեպաշտաց...»¹⁴: Ուրեմն, մեշտեղից վերանում է «Խորդա-խորդու»-ը, և նրա տևող բռնում է «Խոյդան»:

Սակայն ի՞նչ է «Գրիգորոգրիսա»-ն, ի՞նչո՞ւ այն ընթերցվել է որպես միայն «Գրիգորիսի»¹⁵: Տէ՛ որ

¹³ Հովի. եպս. Ծամաթունյացը, Ստորագորություն..., Բ, էջ 367. «և խորդն Գրիգորայ», Արցախ, էջ 850. «և խորդն Գրիգորայ», Վիմ. տարեգիր, էջ 82. «և խորդն Գրիգորոյ»:

¹⁴ Կիրակոս, էջ 215:

¹⁵ Հանիդողյան, Մ. Գոշը և Նոր Գանձիկ վանքը, Հայկ. ՍՍՀ պատմ. խանգարանի գիտ. աշխ.-եր, Բ. I, Երևան, 1948, էջ 118: Կարապետ եպիսկոպոսը, նրանից առաջ էլ Մեսրոպ Սմբատյանցը նկատել են «Գրիգորոգրիսա» արտապար գրությունը, սակայն համարել են փորագրող վիալը և մատնել անուշադրության (ուժն Մ. Սմբատյանց, Տեղագիր Գևորգ Բարձրությունի տոհմի սկրունիներից:

պնտեղ առաջին մասը պարզ «Գրիգոր» է: Եթե նկատի առնենք վիմագրական համառոտություններին առանձնահատուկ ձևերը, կտևենք, որ «Գրիգոր»-ն էլ «Գրիգորիս»-ի միմական մասն է, որը լրացման համար պետք է սկզբից ընթերցել «Գրիգորո»-ի «Գրի» մասը, և այն ժամանակ կատացվի «Գրիգորիս»՝ Վախտանգի հոգևորական եղբայր անունը, որը Բիշված տեսանք Կիրակոսի մոտ: Եվ առանց այս ճշգրտումի միանգամայն անհականակի պիտի մնար, թե ինչպէ՞ն է պատահել, որ մի այսպիսի հավատանիւսան կարևոր գործին մասնակցել են Հասան Խաչենցու հինգ որդիները՝ Վախտանգը, Սմբատը, Վասակը, Խոյրանը, Գրիգորը, իսկ նրանց վեցերորդ՝ Բոգևորական եղբայր Գրիգորիսը դուրս է մնացել:

Հավանական է, որ Հասանն իր եկեղեցին կառուցած ինի կրոնավարելուց առաջ: Խակ եթե ինքը չի կառուցել, ապա այն կառուցված է եղել մինչև իր կրոնավարելը, այլապես միշտ արձանագրությունն որից բովանդակություն կունենար:

Եկեղեցին իր պատերի վրա հետաքրքիր միշտակ-ներ է պահում՝ գեղեցիկ խաչքարեր պատվիրառու-ների արձանագրություններով, արձանագրություններ սովորական քարերի վրա, որոնք թենք այնպես դրվել են պատերի մեջ, անզիր հին-հավասարաթև խաչեր կրող քարեր ու առնասարակ նախշած քա-րեր, նույնիսկ մի ջաղաքքար, որը զարդարում է դուռագրություն:


Սոցակ-Խաչենում գեղեցիկ սովորություն է եղել՝ վահանա շենք կառուցելիս նրա պատերի մեջ դնել ինի խաչքարեր ու արձանագրություններ, պատմական հիշատակների հետ կապված իրեր ու առարկա-ներ, և, պատիսի, կառուցված շենքը դարձել է յուրատևակ թանգարան: Նման գեղեցիկ օրինակ է Խաթրավանքը, որի պատերի մեջ երևացող արձա-նագրություններով ու խաչքարերով կարելի է քացել գավառի նախընթաց պատմության ու մշակույթի շատ ծալքեր, որոնց մասին որիշ առյուրներ գոյություն չունեն:

Հասանի եկեղեցուց հարավ, շեղակի թեքության վրա է կառուցված մի այլ եկեղեցի, որն իր ճար-տարապետական արժանիքներով վանքի ներսում կարող է զիշել միայն Արգու-խաթռունի կաթողիկեն: Կառուցողի արձանագրությունը գտնվելու է հարա-վային պատի մեջ դրված մի անկանոն քարի վրա. «Ք. ՈԿ (=1211) ևս Գրիգոր // ևս որդի Հասան // ա շինեցի զուած // արս յիշատակ // նոգ իմո: Յառ // աւթա յիշեցէք»:

Այս Գրիգորիսին չի կարելի շփոթել համորդի հետ, որը և Հասանի որդի էր, բայց քերորդի՝ Զաքա-րիի ու Խվանեի: Եկեղեցին կառուցողը Հաթերքի տեր և կրոնավորյալ Հասանի որդին է, Վախտանգի եղ-բայրը, նոր Գետիկի կառուցող վեց եղբայրներից

մեկը, որը երկար տարիներ առաջնորդ էր Դադի վանքում:

Այս տաճարը քառակուսի հատակագիծ ունի: Սրա-նի մեջ կանգնած են չորս փառախող կլոր պունիք, որոնք դրված են քանդակազարդ մուցերի վրա, ու-



Դադի վանքի մեջ խաչքարի ստորին մասը

ևն շքեղանախ խոյակներ, և սրանց վրա բարձրա-նում են գեղեցիկ կամարները՝ իրենցից վեր պահե-լով թաղական կոտորը: Կորի կենտրոնում գմբեթի կլոր թմբուկն է՝ լուսի համար կենտրոնից քացված անցրով: Սյուներն ու պատկից կիսապուները իրար են միանում փոքրիկ կամարներով, որոնք ևս ձևա-վորված են զարդերով:

Տաճարը մեջ թափ ունի, ապահով խորքում մի փա-ռանելով խաչքար կամ պատի վերևում դրված այնպես, որ մտնուն անմիշապես նրա տպավորության տակ է մտնու:

Մուտքը հարավից է, երևի այն պատճեռով, որ արևոտյան պատը կիսով չափ խրված է եղել հողի մեջ: Կակազն այս կողմից էլ հետագապում կառուցել են մի երկար պողոսածն գալիք, որն այժմ կիսա-վեր վիճակում է, և պատերի մեջ մնում են որմնա-պուները, որոնք վկայում են, որ շենքը ծածկված է եղել կամարական թաղով:

Մեր նկարագրած այս բոլոր վանական շինու-թյուններն առնվազ են մի ցածրադիր, տեղ-տեղ ա-

վերվան պարսկի մեջ, որը, հավանաբար, մին ժամանակներում ավելի բարձր է եղել և պաշտպանական գոտի է ծառայել մասն Բարձակումների դեմ: Պարսկի կառուցման ժաման մատենագրական տեղեկություններ չկան: Երևի կարելի կիմի գտնել վիմագրական հյութեր, որոնք կը ճշգրանեն մեր տեղեկությունն այդ առջիվ: Սակայն Արգու-խարունի և կեղեցու թիկունքում, պարսկի մեջ մենք գտանք մի խաչքար, որի 7 տողանոց արձանագրությունը վերաբերում է 1200 թվականին և վկասում է, որ գուն այդ ժամանակ պարհապե գոյություն է ունեցել («Ած ողորմի Գրիգորիկա ամ (ԵԵ)»):

Պարսկից ներս բազմաթիվ ամերակներ կան, սըրբատաշ ու անոնաշ քարերի կուտակումներ: Պարսկից դուրս ևս տասնյակ շնորհել կամ կանգուն, կիսավեր ու ամեր վիճակում: Պարզ է, որ դրանք վանքի տրանտեսական ու հոգևոր կամքի օժանդակ կենուրն են հանդիսացել: Հարկավ, մենք շխտեցինք այսքան մեծ վանքի հյուրատան, գրատան (մատենադարան), ձիթահանքի և ուրիշ նման շինուալիքների մասին, որոնք անապահ գոյություն են ունեցել: Օրինակ, մի արձանագրության մեջ Զարաքերդի եպիսկոպոս Ներսես ազգի է նվիրում վանքի հյուրատանը «...ևս որ Ներսես եպիսկոպոս Զարաքերդ միաբանեցա Դատիվանացն մին ազգի հյուրատանմ... թ. 2Բ» (=1253): Իսկ մենք դեռ չգիտենք, թե եղած ավերակներից ո՞րն է եղել հյուրատանը:

Դադի վանքը, ասացնենք, մեծարանակ հոգևորականության օջախ է եղել և ունեցել է մշակույթային լայնահուն ու եռուն կամք: Այս կամքն աստիճանաբար մարտում է սկսած 17-րդ դարից, եթե Շահ-Արա Ա-ի կազմակերպած հայկական բռնազարդեցումների խորչակն անցնում է Խաչենի արևմտյան մասով, և այս գալաքտների տասնյակ հազարական հոդից, քշվում Պարսկաստանի խորքերը: Հետագայում այս բռնագողության շարունակվում է առավել մեծ չափերով, բռնակայ Պարսկաստանը, լուսային Հայաստանի (Արցան-Սյունիք) ու պահական ուժերը ջաւարելու, այս երկրամասի պաշտպանական միասնությունը մեկը ընթառ ենոքելու հայտալով, տեղահանված հայության փոխարեն Պարսկաստանի խորքերից քրոր մահմետական հոծ բնակչություն է քերում-բնակեցնում մին հայկական այս գալաքտներում:

18-րդ դարում, շնայած վերը հիշված բռնազարդերին ու բնակչության մեջ արթատականորուն ստեղծված օտար տարրին, Դադի վանքի շրջակարքում դուռ կամ միաձայու հաղություն կար, որը և պահում էր միավորց մշակուրային կմասրոնի հայաշում կամացը: Հիշատակարաններն ու կյութական մշակույթի տարրականները մեզ են ներկայանում որպես այդ կամքի վկայություններ: 1745 թ. պատրաստված մի արձաքը խոշոր, մարզարտաշար խաչ կամ Դադի վանքի անունը. «Թիշտառի է կոմիերեցի¹⁶ Պատրաստին և կողակցու Սիմեոն և որդոյն Դադին, ի դուռ Դադի վանքին, որ է ի Խարան, թիվն ՈԾՂԴ ին»¹⁷:

Իսկ շորջ մի դար հետո Սարգիս արքեա. Զայսանցն ամերակ ու խարխուղ գտավ Դադի վանքը: «Ալենքիկ տեղիք դարան են աւազակաց և ասպատակաց Արցան և անանգի», և մահմետականները մնավանդ սրբարաններում պահում էին «զիօնու խաչանց իրոց և զօնու անասնոց»¹⁸, սպա. «Զատաշեան մատանց և սենեկաց են լայնատարած այգիք արդին անարակը, միան միջարձը ծառը վարդնացեալը դեռ ևս անձն և բազմանան»¹⁹:

Այս է Դադի վանքի՝ Հայոց արևելյան կողմանց նոգելոր ու մշակուրային հնագույն և ամենախոչը կմասրուններից մեջի պատմական ճակատագիրը: Վանքի ճարտարապետական կառուցմերը և հատկապես Արգու-խաթունի կերտած կաթողիկեն ու զանգակատան երկու խաչքարերը հայ բազմադարյան ճարտարապետության ու քարգործ արվեստի ամենալուշագործ երևույթներից են, արժանի առավել խոր և համակողմանի ուսումնասիրության:

¹⁶ Երևի Գոմեր (դր. բարրառով՝ «Կյումեր») տեղանունն է, որ շատ է պատահում Սյունիքում ու Արցանում:

¹⁷ Հայերն արձանագրությամբ առարկաներ. Հայկաշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ I, Երևան, 1984, էջ 69:

¹⁸ Սարգիս արքեա. Զայտեանց, Շանապարհորդություն ի մեծն Հայաստան, Բ, Տիմիս, 1858, էջ 222–224:

¹⁹ Սարգիս արքեա. Զայտեանց, Բ, էջ 225:

